

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՌԹՆԵԱԿԸ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՁ

Նախորդ տարիներուն նման, այս տարուան Յունուար ամսուան վերջին երկու կիրակիներուն միջև ինկող շաբաթը (Յուն. 22-24) նկատուած էր իբրև Եկեղեցիներու Միութեան Եօթնեակ: Ութ օրերու ընթացքին տեղի ունեցան 10 նաւաքայլներ, ամէն երկուսը Ս. Քաղաքիս տարբեր յարանուանութեանց պատկանող եկեղեցիներէն մէկուն մէջ, իսկ զոչք կիրակիներուն՝ զոչք նաւաքայլներ:

Կիրակի, 22 Յունուար, կէսօրէ առաջ ժամը 9ին, Ֆրանչիսկեաններու Ս. Փրկիչ Մայր Եկեղեցիին մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Լատին համայնքի նորընտիր Հովիւ Հայր Ըօրճ Ապու-Պազէն բացումը կատարեց հանդիսութեանց, խօսելով Եկեղեցիներու մերձեցման և համագործակցութեան անհրաժեշտութեան մասին՝ մասուանդ քրիստոնէութեան կեդրոն այս ստանին մէջ, ուր սակայն դժբախտաբար փոքրամասնութիւն մը կը կողմեն քրիստոնեաներ: Քարօզի վերջաւորութեան ըսուած — «Աշխարհի բոլոր մասերուն մէջ Եկեղեցիներու Միութեան Եօթնեակի սահմանուած օրերն են Յունուարի 18-25ը: Սակայն, որովհետեւ մեր Հայ եղբայրները Միւսուղը Յունուարի 19ին կը տօնեն, եօթնեակը կը կատարուի քանի մը օրերու յապաղումով»: Ան բաղձանք յայտնեց որ մօտ ապագային քրիստոնեայ համայնքներ համաձայնութեան գան գէթ մեր կրօնքին երկու մեծագոյն տօները՝ Ս. Զատիկը և Ս. Միւսուղը միասին տօնակատարելու համար:

Նայն երկուսը ժամը 4ին, Եմիթ Աղջկանց Իօյէճի ընդարձակ սրահը կը յորդէր ամենազգի հաւատացեալներու բազմութեամբ: Ուրիշ տարիներու նման, կրօնական համերգ մըն էր կատարուածը:

Երկու ժամերու ընթացքին յաջորդաբար հանդէս եկան Յոյներու, Հայերու, Ֆրանչիսկեան Հայերու, Լուսաբակեաններու և Ֆրէրներու վարժարանի երգչախումբերը, ներկաներուն հրամցնելով կրօնական երաժշտութեան նմուշներ: Հայերը միակն էին որ կրօնականին (առաւելաբար Ս. Միւսուղեան մեղեդիներ՝ երգուած զեկովորութեամբ Ս. Աթոռոյս Դպրապետ Պրն. Սահակ Գալայճեանի) քովն ի վեր հանդէս եկան աշխարհիկ կատրններով: Ս. Աթոռոյս երկուս երգչախումբի անդամներէն Պրք. Ալեքս Գալայճեան և Յովհաննէս Պետրոսեան մեներգեցին: Իւրաքանչիւր կտորի համար անգլիերէն լեզուով հարկ եղած բացատրութիւնները տուաւ Հոգչ. Տ. Հայկազուն Արղ. Մելիզոնեան, ինչպէս ելոյթները, լայն մանաւանդ հայկականները, արժանացան ներկաներու սրտընդստ ծափահարութիւններուն:

Յաջորդ օր, Երկուշաբթի, 23 Յունուար, կէսօրէ ետք ժամը 4ին, Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին լեցուն էր արդէն զանազան յարանուանութիւններու պատկանող եկեղեցական թէ աշխարհական հաւատացեալներով: Կէս ժամ անաղ նաւաքայլի ընթացքին կատարուեցան Հայց. Եկեղեցւոյ ճաշու ժամերգութեան սոթօքներ և Ս. Գրեհան ընթերցում-

ներ: Երեկոյթը բացաւ Անկլիքան Արքեպիսկոպոս Գերշ. Յայէք Հատտաա, Տէրունական աղօթքի արասասնութեամբ: Հապէշ վարդապետ մը եթովպերէն լիզուով կարդաց Պօղոս Առաքեալի թուղթերէն հատուած մը, իսկ Յրանչիսկեան Հայր Իկնաղիօ Մանչինի՝ Ֆրանսերէն լիզուով Աւետարանական ընթերցուած մը: Հայերէն լիզուով ընթերցումները կատարեց Հոգշ. Տ. Ասպետ Արղ. Պալեան: Հաւաքոյթը փակուեցաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպոս, Աճէմեանի օրհնութեամբ:

Երեքշաբթի, 24 Յունուար, երեկոյեան ժամը 5ին, երկաթուղիի կայարանին մօտը գանուող Սկովտական Ս. Անդրէաս եկեղեցիին մէջ էր հաւաքոյթը: Առաջին ասրին էր որ յիշեալ եկեղեցիին մէջ կը կատարուէր նման արարողութիւն մը: Հան փութացած էին զանազան յարանուանութիւններէ ներկայացուցիչներ, որոնց կարգին Հոգշ. Տ. Հայկազուն Արղ. Մելիգոնեան և Հոգշ. Տ. Բարսեղ Արղ. Գալէմաէրեան: Երբայերէն, անգլիերէն, արարերէն և գերմաներէն լիզուներով կատարուած Ս. Գրական ընթերցումներէ ետք, Հոլանտացի Բողոքական Երէջ Տքթ. Քուս Սքօնրվէլտ խօսեցաւ եկեղեցիներու Միութեան գաղափարին շուրջ: Համայնքի Հովիւ Վերապատուելի Թօմ Հուսթօն ըրաւ կարճ աղօթք մը, իսկ Լուսերականներու Երէջը՝ Փրօփոթ Հէլմուսթ Կլաթթէ փակեց հաւաքոյթը իր օրհնութեան խօսքով:

Չորեքշաբթի, 25 Յունուար, կէսօրէ ետք ժամը 4ին, Բեթղեմէմի Տամբուն վրայ գանուող Թանթուրի էքսպէնէիք կեդրոնի մատուռին մէջ էր հաւաքոյթը: Հակառակ փոթորկաւ օդին և վայրին հեռաւորութեան, հան փութացած էր կոկիկ բողմութիւն մը այլազան քրիստոնեայ յարանուանութիւններէ: Այդ օր մեր Անուանակոչութեան նախատեսակը Ըլլալուն, Հայեր չմասնակցեցան գրեթէ ամբողջութեամբ Ս. Գրական ընթերցումներէ և հոգեւր երգերէ բազկացած այդ հաւաքոյթին:

Հինգշաբթի, 26 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3.30ին, Սիոն լիւրան Վերջին Ընթրիքի վերնատան մէջ կայացաւ վեցերորդ հաւաքոյթը եկեղեցիներու Միութեան: Կատարուեցան ընթերցումներ Հին և Նոր կտակարաններէն: Յոյն-Կաթոլիկ եկեղեցիի երկսեռ երգչախումբը հանդէս եկաւ կրօնական երգերով: Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս կատարեց փակումը երեկոյթին:

Ուրբաթ, 27 Յունուար, երեկոյեան ժամը 5ին, Յրանչիսկեաններու Մայր եկեղեցին լիցուն էր հոգեւորական և աշխարհական դէմքերով: Մէկ ժամ տեւող տպաւորիչ հանդիսութեան մը ընթացքին, կարդացուեցան Սաղմոսներ և եղան քանի մը լիզուներով Ս. Գրական ընթերցումներ: Համայնքի Հովիւ Հայր Ճօրճ խօսք առնելով շեշտեց այն բարիքները՝ զորս քրիստոնեայ համայնքներ պիտի ստանան իբրև պտուղը համագործակցութեան ու մերձեցման: Համբաւուար երգեհանահար Օկիւսթին Լամա ներկաները սգևորեց իր նուազած հոգեւր երաժշտութեան կտորներով:

Շաբաթ, 28 Յունուար, կորզը եկած էր Յոյն-Օրթոտօքս համայնքին, որ ամենէն բազմամարդը կը նկատուի Ս. Երկրին մէջ: Կէսօրէ ետք ժամը 4ին, Յունաց Պատրիարքարանի Տամբուն վրայ գանուող Ս. Նիկիողայոս Սքանչելագարձ Հայրապետի անունը կրող վանքի գողարիկ եկեղեցին լիցուն էր հաւատացեալներով: Մէկ ժամուան ընթացքին ներկաները ունկնդրեցին Բիւզանդական եկեղեցիի Կիրակմուաքի ժամերգութեան հոգեգծայլ մեղեդիները և դիտեցին հոգորհնէքի արա-

բողոքները: Հայր Մելիսեան անդինքէն լեզուով արտայայտուեցաւ վերջին տասնամեակներուն ընթացք առած ու ծաւալած էքումէնիք շարժումին մասին:

Կիրակի, 29 Յունուար, փակման օրն էր Եօթնեակին: Կէսօրէ տասջ ժամը 11ին, Ֆրանչիսկեաններու Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Մարտնիթ ծէսով Ս. Պատարագ: Պատարագեց և քարոզեց Ս. Երկրի Մարտնիթ փառքովիւ համայնքի հովիւը՝ Հայր Օկիւսթին Հարֆուշ, յորդորելով աշխարհականները որպէսզի իրենց կարելիութեան սահմանին մէջ զօրավիգ կանգնին հոգևորականներուն՝ Եկեղեցիներու Միութեան բողոքի երազի իրազօրման ճամբուն վրայ:

Փակման հաւաքոյթը կատարուեցաւ նոյն երեկոյ ժամը 6ին, Անկլիքաններու Աէյնիթ ձօրճ Եկեղեցիին մէջ: Հախառակ վայրին հետուարութեան, բազմութիւն մը փութացած էր լեցել Եկեղեցին: Մեր կողմէ ներկայ էին դարձեալ Հոգշ. Տ. Տ. Հայկազուն և Բարսեղ Արեղանբեր: Անկլիքան Արքեպոս. Գերշ. Տ. Ֆայէք Հատասա և Արար-Լուսերականներու Երէց Տաւա Հատասա ըրին մասնաւոր ազօթքներ՝ Եկեղեցիներու Միութեան համար: Սրտագրաւ էր պահը երբ այլազան համայնքներու պատկանող հաւատացեալներ ծնրազիր արասանեցին քրիստոնեայ Եկեղեցիներու «Հաւատամք»ը և քիչ հաք Տէրունական Ազօթքը՝ իւրաքանչիւրը իր մայրնի լեզուով:

Գ.

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]